



# ՊԶՏԻԿ-ՄԶՏԻԿ

ՄԵՐ ՅԱԶՈՐԴ  
ԹԻԲԸ՝  
ՈՒՐԲԱԹ,  
28 ՅՈՒՆՈՒՄ  
2020

«ԱԶԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԲԵԼՈՒԱԾ



ՍՕՍԻ  
ՅԻՇԱՏԱԿԻ  
ՖՈՆՏ


ԺԸ. ՏԱՐԻ

ԹԻԲ 5 (187)

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

bzdig.mezdig@gmail.com

«Պզտիկ-Մզտիկ» կը շնորհաւորէ ձեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը մաղթելով՝  
Մեր սիրելի Լիբանանին՝ խաղաղութիւն եւ ապահովութիւն,  
Մեր ժողովուրդին՝ համերաշխութիւն եւ առողջութիւն,  
Մեր սիրելի փոքրիկներուն՝ յաջողութիւն եւ երջանկութիւն,  
Ու բոլորի՞դ հաւատք եւ սէր:  
Թող այս Նոր տարին ըլլայ լեցուն սիրով ու հանդուրժողականութեամբ:



Սինթիա Լահիամ  
2. դասարան



Լուի Զեյթեան  
Ե. դասարան



Փոլ Աւետիսեան - 8 տարեկան



Սազո Ճապրայեան - Ե. դասարան



Գաբրիել Զաւարթեան - 2. դասարան



Մեղեդի Զերմենեան - 4. դասարան



Զրիսթել Գազանճեան - 7. դասարան



Յարութ Արուշեան - 2. դասարան

Այս թիւին հայկական վարժարաններէն իրենց մասնակցութիւնը բերին Ազգային «Յառաջ-Գալուստ Կիւլպէնկեան» վարժարանի աշակերտները:



ՁԻՆՆԻ

### ԿԱՂԱՆՂ ՊԱՊԱՆ ԱՒԱՐՏԱԾ Է ԻՐ 64-ՐԴ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆԸ

Այս տարի 64-րդ տարին է Կաղանղ պապային աշխարհի շուրջ ճանապարհորդության, որուն ընթացքին ան ուրախացուցած է 7,5 միլիառ երեխայ ու չափահաս: Կաղանղ պապուկը արդեն վերադարձած է տուն՝ Հիւսիսային բեւեռ, պատրաստուելու համար յառաջիկայ տարուան շրջագայութեան: Յիշենք, որ այս տարի Կաղանղ պապուկը 7.574.576.003 նուէր բաժնած է Երկիր մոլորակի բնակիչներուն: Ան իր նստավայրէն՝ Հիւսիսային բեւեռէն ճամբայ ելած է 24 Դեկտեմբերին, Երեւանի ժամանակացոյցով՝ 13:30-ին (մեր ժամանակացոյցով 12:30-ին)՝ ինը եղջերուներով լծուած սահնակով:



Սիրով կը սպասենք քեզ՝ յառաջիկայ տարի:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԼԽԱՒՈՐ ՏՕՆԱԾԱՌԸ

Այս տարի Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ գետեղուեցաւ նոր տօնածառ մը՝ 37 մէթր բարձրութեամբ: Տօնածառին լոյսերը վառեցին 21 Դեկտեմբերին:

Երեւանի գլխաւոր տօնածառը ԱՊՀ-ի երկիրներու մայրաքաղաքներու գլխաւոր տօնածառերու շարքին միակ բնական տօնածառն է այդքան բարձրութեամբ:

Բարի ու խաղաղ տարի, մեր սիրելի՛ հայրենիքին:



### ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՓԼԽԱՒՈՐ ՏՕՆԱԾԱՌԸ

Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ 20 Դեկտեմբերին վառած են գլխաւոր տօնածառին լոյսերը, որով սկիզբ առած են տօնական ձեռնարկները:

Խաղաղութեան ու Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման տարին թող ըլլայ 2020 թուականը:

Յարատեւութի՛ն՝ մեր սիրելի՛ Արցախին:



### «ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՍՊԱՌ ԳՐԱԳԸ ԹՈՂ ԼՈՒՍԱԻՈՐԷ ԲՈԼՈՐԻԳ ՕԾԱԽՆԵՐԸ ԵՒ ՎԱՌ ՊԱՀԷ». ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Հայաստանի ազգային հաւաքականի եւ «Ա.Է.Ռոմա» խումբի միջնապահ Հենրիխ Մխիթարեան գրած է.

«Իմ սիրելի՛ հայրենակիցներս,

Կը փափաքիմ շնորհաւորել ձեզ բոլորդ նոր տարւան առիթով: Թող այս տարի հայ ժողովուրդին համար ըլլայ աւելի մեծ յաջողութիւններու եւ բարձունքներու տարի, թող որ մարդիկ ապրին սիրելով եւ յարգելով զիրար, միասնական եւ առանց չարութեան ու ատելութեան:

Սահմանին կանգնած մեր հայ զինուորներուն կը մաղթեմ անփորձանք ծառայութիւն եւ բարի վերադարձ իրենց ընտանիքները:

Թող որ յաջողութեան անսպառ ճրագը բոլորիդ օճախները լուսաւորէ եւ վառ պահէ:

«Պգտիկ-Մգտիկ»-ն ալ Հենրիխին կը մաղթէ նորանոր յաջողութիւններ եւ յարատեւ վերելք:



### ՀՐՈՒՇԱԿԵՂԷՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԵՒ 10 ՀԱԶԱՐ ԵՒՐՈՅԻ ՉԷՔԸ՝ ԿԱՐԿԱՆՂԱԿԻՆ ՄԷՁ

Սպանիոյ քաղաքներէն մէկուն հրուշակեղէնի գործարանի սեփականատերերը կը շարունակեն դրամական անակնկալներով կարկանդակներ պատրաստելու ասանդութիւնը: Այս անգամ ամառորեան տօներու նախօրեակին, յաճախորդներ սիրաշահելու համար, անոնք յայտարարած են, որ 10 հազար եւրոյի չէք մը գետեղած են իրենց կարկանդակներէն մէկուն մէջ: Իսկ անուշեղէնը կարելի է գնել 29 Դեկտեմբերէն մինչեւ 6 Յունուար:



Մեծ քանակութեամբ կարկանդակներու շարքին, որոնք սպանացիները կը գնեն Յունուար 6-ին՝ Աստուածայայտնութեան օրը, միայն մէկուն մէջ կը գտնուի 10 հազարոց չէքը:

Նման ծանուցում մը կազմակերպելու գաղափարը առաջին անգամ յղացուած է 2009 թուականին, երբ հրուշակագործները որոշած էին յաճախորդը հրապուրել 500 եւրոյով: Անկէ ետք նման անակնկալի գումարը հասած է մինչեւ 10 հազար եւրոյի:

Շնորհաւորութիւններ՝ չէքով անուշեղէնը գնած յաճախորդին:


### ՄԿՐԱՏՆԵՐՈՎ ԵՒ ԴԱՆԱԿՆԵՐՈՎ ՏՕՆԱԾԱՌ

Լիթուանիոյ մայրաքաղաք Վիլնիուսի օդակայանին աշխատակիցները որոշած են իւրայատուկ ձեւով ուղեւորներուն յիշեցնել օդանաւային անվտանգութեան մասին: Այդ իմաստով ալ անոնք տեղադրած են տօնածառ մը, որ պատրաստուած է օդանաւով փոխադրելու համար արգիլուած իրերը, ինչպէս՝ մկրատները եւ դանակները, որոնք գրաւուած են ճամբորդներէն:



# ՉԻՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

ՅՈՒՆԵՍԿՈ



Տօնական այս օրերուն «Պզտիկ-Մզտիկ» փափաքեցաւ ձեզի ներկայացընել չինական Նոր տարին, որ տարբեր է մերինէն:

Չինական Նոր տարին կը կոչուի նաեւ լուսնային Նոր տարի կամ գարնանային փառատօն:

Ըստ չինական օրացոյցին, անցեալ տարուան առաջին ամիսը սկսած է 5 Փետրուարին: Իսկ 2020-ի Նոր տարին կը սկսի մեր 25 Յունուարին ու կ'աւարտի 11 Փետրուար 2021-ին:

Բազմաթիւ երկիրներ, ինչպէս՝ Գաբոնային Զորեա, Վիեթնամ, Սինկափուր, Մալեզիա, Ինտոնեզիա եւ Թայլան, Նոր տարին կը տօնեն ըստ չինական օրացոյցին:



Չինական Նոր տարին դարերէ ի վեր կը տօնուի. ան կը տեւէ 15 օր: Նոր տարին ընդհանրապէս կը տօնուի վիշապի եւ առիւծի պարերով, նուէրներու փոխանակումով եւ կրակէ լապտերներով: Նոր տարուան տօնակատարութիւնները կ'աւարտին մոգական լապտերի փառատօնով:

Չինացիներուն տարին, ըստ իրենց օրացոյցին, մերինէն 30-50 օր պակաս է: Անոնց ծննդեան աստղերն ալ մերինէն տարբեր են: Չինական աստղերը կազմուած են անասուններէ, որոնք են՝ առնետ, եգ, վագր, նապաստակ, վիշապ, օձ, ձի, այծ, կապիկ, քըլոր, շուն եւ խոզ: Կարգը չի փոխուիր: Այսպէս, 2018-ն շունի տարի էր, 2019-ն՝ խոզի, ուրեմս 2020-ը կ'ըլլայ առնետի տարի:

Չինացիները Նոր տարուան առիթով իրարու բարի բախտ, ուրախութիւն եւ հարստութիւն կը մաղթեն՝ ըսելով. «Զեզի կը մաղթենք բարեբեր տարի մը», չինարէնի մանտարին լեզուի բառերով՝ «Կոնկչի ֆա ձայ»:



Նոր տարուան ժամանակաշրջանին չինացիները կ'ուտեն բախտ բերող ճաշեր, այսինքն՝ ձկնեղէն: Ձուկը իրենց համար կը խորհրդանշէ բարի բախտ, հարստութիւն եւ առողջութիւն: Փառատօնին աւանդական ճաշերէն են **տամիլիկները**: Այս գունդ խմորները լեցուած կ'ըլլան բանջարեղէններով, նարինջով, չոր պտուղներով, նոյնիսկ անուշեղէններով, որոնք դարձեալ կը



նկատուին բախտաբեր ճաշեր: Զաղբաւենիի տուփիկներ եւ կլոր ձեւի կրկնեփներ կը խորհրդանշեն ոսկի կամ հարստութիւն: Եւ վստահ պիտի ըլլաս, որ պնակը երբեք պարապ չձգես, որովհետեւ այս մէկը կը նշանակէ, թէ բախտը ձեռքէդ կ'երթայ: Այս տօնական օրերուն պէտք չէ օգտագործուի դանակը, որովհետեւ շատերուն համար դանակով կտրելը հիւանդութիւն կը բերէ, ինչպէս նաեւ կրակ պէտք չէ վառել ճաշ պատրաստելու համար:

Ժողովրդականութիւն գտած ճաշ է նաեւ երկար **նուտուրը**, որ կը խորհրդանշէ հարստութիւն եւ երկար կեանք:

Իսկ Նոր տարուան յատուկ ճաշատեսակն է Եուշենկը, որ ձուկով եւ բրինձով կամ երկար **նու-**

տուրով պատրաստուած է:

Ան դարձեալ կը խորհրդանշէ հարստութիւն եւ արեւշատութիւն:

Գիտե՞ս, թէ ի՞նչ պէտք չէ ընես չինական Նոր տարուան առաջին օրը, որպէսզի բարի բախտ կամ հարստութիւն չկորսնցնես:

Մագդ կտրել կամ լուալ.

Տունդ աւելով աւելով մաքրել. իսկ եթէ պիտի մաքրես, պէտք է մուտք կոխած ըլլայ.

Լուացք պէտք չէ ընես.

Պէտք չէ նուէրներ մատուցես սեւ կամ ճերմակ գոյնով.

Ժամացոյց կամ կօշիկ նուիրել կարելի չէ.



Անգոյգ նուէրներ չես կրնար ընել: Նուէրները միշտ գոյգ պէտք է ըլլան.

Տօնական օրերուն ճերմակ, սեւ եւ գոց կապոյտ չես կրնար հագուիլ. գոյնագոյն հագուստները կը քաջալերին, ինչպէս՝ կարմիր, դեղին, նարնջագոյն...

Տօնական այս օրերուն մարդիկ ընդհանրապէս կարմիր կը հագուին: Նոյնիսկ նուէրները, օրինակ՝ դրամը, կը տրուի կարմիր պահարանով:

«Պզտիկ-Մզտիկ» ձեզի կը մաղթէ խաղաղ ու ապահով տարի, որ լեցուն ըլլայ ձեր երազանքներուն իրականացումով:

Ո՞ր տարուան ծնունդ ես: Փնտռե՛ ցուցակին վրայ ու գտի՛ր չինական աստղը:

| WHICH CHINESE ZODIAC ARE YOU? |      |       |        |        |       |       |      |        |         |      |      |
|-------------------------------|------|-------|--------|--------|-------|-------|------|--------|---------|------|------|
| BAT                           | OX   | TIGER | RABBIT | DRAGON | SNAKE | HORSE | GOAT | MONKEY | ROOSTER | DOG  | PIG  |
| 2008                          | 2009 | 2010  | 2011   | 2012   | 2013  | 2014  | 2015 | 2016   | 2017    | 2018 | 2019 |
| 1996                          | 1997 | 1998  | 1999   | 2000   | 2001  | 2002  | 2003 | 2004   | 2005    | 2006 | 2007 |
| 1984                          | 1985 | 1986  | 1987   | 1988   | 1989  | 1990  | 1991 | 1992   | 1993    | 1994 | 1995 |
| 1972                          | 1973 | 1974  | 1975   | 1976   | 1977  | 1978  | 1979 | 1980   | 1981    | 1982 | 1983 |
| 1960                          | 1961 | 1962  | 1963   | 1964   | 1965  | 1966  | 1967 | 1968   | 1969    | 1970 | 1971 |
| 1948                          | 1949 | 1950  | 1951   | 1952   | 1953  | 1954  | 1955 | 1956   | 1957    | 1958 | 1959 |
| 1936                          | 1937 | 1938  | 1939   | 1940   | 1941  | 1942  | 1943 | 1944   | 1945    | 1946 | 1947 |
| 1924                          | 1925 | 1926  | 1927   | 1928   | 1929  | 1930  | 1931 | 1932   | 1933    | 1934 | 1935 |
| 1912                          | 1913 | 1914  | 1915   | 1916   | 1917  | 1918  | 1919 | 1920   | 1921    | 1922 | 1923 |
| 1900                          | 1901 | 1902  | 1903   | 1904   | 1905  | 1906  | 1907 | 1908   | 1909    | 1910 | 1911 |



ՁԻՆՆԵՐ

## 2019-Ի ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՍՈՒՂ ՉԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԷՆ 15 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՉԱՐԴԵՂԷՆՆԵՐՈՎ

Սպանական հանգստավայր մը իր սրահը զարդարած է տօնածառով մը, որուն զարդարանքներուն համար ծախսուած է 15,4 միլիոն տոլար: Չարդարանքները՝ ապակեղեններ, անուշահոտի շիշեր եւ այլն, բոլորը ագուցուած են թանկարժէք գոհարներով, ինչպէս՝ ճերմակ, սեւ, կարմիր եւ վարդագոյն ադամանդներով, օգտագործուած է Լոյսիսկ շափիւղայ:



Ճիշդ է, որ այս տօնածառը կը շլացնէ մարդուն աչքերը, սակայն զայն ունենալու համար նախ պէտք է ապահովել տօնածառին պահակները...

## ԾՆՆԴԵԱՆ ԱՍՏՂԸ

Բոլոր տօնածառերու գագաթին կը տեսնենք Յիսուս Մանուկին ծնունդը աւետող աստղը: Բայց բնաւ պատկերացուցա՞ծ էիք, որ այդ աստղը պատրաստուած ըլլայ ոսկիով եւ 281 ադամանդներով, առաւել՝ 5 մեծ ու հազուագիւտ ադամանդով, որոնք իւրայատուկ փայլք կու տան տօնածառին. սակայն այդ փայլքը վայելելու համար պէտք է վճարել 950 հազար ամերիկեան տոլար, առաւել՝ պահակ մը կարգել տօնածառին:



## ՄԻԱՅՆ 6920 ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐ

Վստահ եմ, որ բոլորդ ալ կը սիրէք Կաղանդ պապուկին եղնիկը եւ կ'ուզէք զարդարել ձեր տուները եղնիկներով ու մանաւանդ երգող եղնիկով: Այսպէս պատրաստուած է խաղալիք մը՝ «երգող եղնիկ»-ը, 65 սմ հասակով: Ան կ'երգէ երեք երգեր՝ շարժելով գլուխը համաչափ ձեւով: Բոլորդ պիտի սիրէք այս եղնիկը եւ պիտի ուզէք ունենալ զայն, սակայն անոր համար պէտք է հաւաքած ըլլաք միայն 6920 ամերիկեան տոլար... ՄԻԱՅՆ:



## ՈՍԿԵԱՅ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Տօնական այս օրերուն անշուշտ անհրաժեշտութիւն է ներկայութիւնը Կաղանդ պապուկին, որ շատ սպասուած է փոքրիկներուն կողմէ, որովհետեւ ան կու գայ նուէրներով: Սակայն կայ յատուկ Կաղանդ պապա մը, որ ինքնին նուէր մըն է ո՛չ միայն փոքրերուն, այլ նաեւ մեծերուն համար, որովհետեւ այս Կաղանդ պապան պատրաստուած է ոսկիով, գօտին՝ ադամանդներով, իսկ գինը՝ 1,6 միլիոն տոլար:



Հիմա ըսէ՛ք ինձի, ո՞վ չ'ուզէր այսպիսի նուէր մը:

## ԾՆՆԴԵԱՆ ՈՒԼՈՒՆՔ ՄԸ

Ո՞վ չի գիտեր ի՞նչ է ուլունքը: Տօնական այս օրերուն ամենուրեք կը տեսնենք ուլունքներ, որոնցմով կը զարդարենք մեր տօնածառերը: Սակայն այն ուլունքը, որուն մասին կը խօսի ձեզի «Պզտիկ-Մզտիկ», սովորական ուլունք մը չէ, որով կրնանք զարդարել մեր տօնածառը: Այդ ուլունքը ունենալու համար պէտք է վճարել 136 հազար ամերիկեան տոլար: Չայն պատրաստելու համար հնարիչը աշխատած է մէկ տարի եւ օգտագործած է 500 ադամանդ, եւ 188 սուտակ ուլունք՝ շրջապատող օղակներուն համար:



## ՓՈՔՐԻԿ ՏՕՆԱԾԱՌԸ

Այն մարդիկ, որոնք չեն ուզեր մեծ տօնածառեր զարդարել ու յոգնիլ, կրնան իրենց տունը ողողել տօնական մթնոլորտով՝ պարզապէս գետեղելով փոքրիկ տօնածառ մը, պատրաստուած՝ 400 ադամանդներով, իսկ զարդարանքները՝ պահպանուած վարդերով: Սակայն իր տունը այս տօնածառով զարդարողը ուշադիր պէտք է ըլլայ, որ զարդը չկոտրէ, քանի անիկա կ'արժէ 1,8 միլիոն ամերիկեան տոլար:



Շնորհաւոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:



## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ հին ժամանակներէն հայերը եղելիս փոխարէն Ամանորին կը զարդարէին ձիթապտուղի կամ խունկի ծառը: Տանտերերը ձիթենիի ճիւղ մը կը կտրէին, տուն կը բերէին, կը զարդարէին կաղիններով եւ ընկոյզներով: Երեկոյեան հաստ ճիւղը կը խրէին նախապէս թխուած մեծ հացի կամ բաղարջի մէջ, իսկ առաւօտեան



Ձիթենի



Խունկի ծառ (խնկենի)

կը տանէին եկեղեցի՝ քահանային օրհնել տալու, յետոյ կը բերէին տուն ու կ'ամրացնէին գերանին:

Հայերը հին ասացուածք մը ունէին. «Առանց գինիի Նոր տարի կու գայ, առանց նգածաղիկի՝ կ'ուշանայ»: Հին ժամանակ նգածաղիկը (օշինդրը) ամենէն տարածուած համեմատներէն մէկը եղած է: Այս փորձաբեր ծաղիկը կ'աճէր Արարատ լեռան լանջերուն: Մարդիկ կը հաւաքէին ու կը չորցնէին գայն: Ուր ալ բնակած ըլլար, հայը ամանորեան կերակուրներուն պատրաստութեան ընթացքին կ'օգտագործէր նգածաղիկը: Այս աւանդութիւնը հայ ժողովուրդի միասնականութեան խորհրդանշանն էր:



Նգածաղիկը (օշինդրը)

Ըստ հայկական աւանդութեան, Նոր տարեան ուտելիքները կ'ընտրուէին այնպէս, որ անոնց անունին մէջ ըլլար «Ն» տառը, այսպէս՝ նգածաղիկ, նուռ, նուշ...



Ծննդեան տօնի ծառի զարդարանքի աւանդութիւնը սկսած է Գերմանիայէն՝ 16-րդ դարէն սկսեալ: Անոր ծագման մասին կան շատ հեքիաթներ ու աւանդութիւններ: «Պգտիկ-Մըզտիկ» պիտի ներկայացնէ անոնցմէ ամենէն հետաքրքրականը:

Երբ Բեթլեհեմի քարայրներէն մէկուն մէջ ծնաւ աշխարհի փրկիչը՝ Յիսուս մանուկ, ո'չ միայն մարդիկ, այլ նաեւ քարայրը շրջապատող ծառերն ու ծաղիկներն ալ փափաքեցան մասնակցիլ այս մեծ խորհուրդին: Այսպէս, անոնք ուրախ ձեւով կը շարժէին, որովհետեւ բոլորը կը ցանկային տեսնել Նորածին Մանուկը. ծառերն ու թուփերը կը տարածէին իրենց ճիւղերը, ծաղիկները կը բարձրացնէին իրենց գլուխները՝ ջանալով տեսնել քարայրին ներսը: Ամենէն երջանիկներն էին քարայրին մուտքին գտնուող երեք ծառերը՝ արմաւենին, թթենին եւ եղեւինը: Երբ տաքը սկսաւ, արմաւենին տարածեց իր լայն տերեւները, որ հով տայ Յիսուսին: Թթենին իր տերեւները տուաւ, որ Անոր համար փափուկ անկողին մը պատրաստէն:



- Իսկ իմ տերեւներս փշոտ են: Ես ոչինչ ունիմ Յիսուս մանուկին տալիք,- մտածեց եղեւինը եւ սկսաւ լալու:

Երբ մթնցաւ, ու երկինքին վրայ սկսան փայլիլ աստղերը, անոնք որոշեցին օգնել եղեւինին: Կամաց-կամաց աստղերը վար իջան, ու նստան եղեւինին ճիւղերուն վրայ, եւ եղեւինը սկսաւ փայլիլ ու շողշողալ: Երբ փոքրիկ Յիսուս արթնցաւ ու տեսաւ փայլփլող ծառը, շատ ուրախացաւ: Անիկա եղաւ Յիսուսի ամենէն գեղեցիկ նուէրը:

Այդ օրէն սկսեալ՝ եղեւինը դարձաւ Ամանորի ծառ, Սուրբ Ծնունդի ծառ:

Հին հայկական աւանդութեան համաձայն, Ամանորի խորհրդանշանը Կաղանդ պապան է, որ կը յայտնուէր գաւազանով եւ ոչխարի մորթէ պատրաստուած քուրճով:

Կաղանդ պապան ազգային արժէքները, սովորութիւնները պահպանող ու սերունդներուն փոխանցող տիպարն է: Անոր կ'ընկերակցէին խլվիկներն ու արալեզները՝ Երա եւ Անի, Հագարան, Փուշ, Իմաստուն, Անտես, Եղեգ, Արեգ, Ասպետ, ճտպտիկ, Փառփառ եւ Չարմազան: Խլվիկին հետ այցելած Կաղանդ պապան փոքրերուն ոչ թէ նուէրներ, այլ Ամանորի եօթը խորհուրդ կը նուիրէր, որոնք էին փոխադարձ յարգանք, խաղաղութիւն, ազնուութիւն, իմաստութիւն, աշխատասիրութիւն, համեստութիւն եւ գոհունակութիւն:

## ԳԻՏԷԻՐ, ԹԷ

Ամանորի եւ Սուրբ Ծնունդի առիթով ժողովուրդին մօտ սովորութիւն կայ տօնածառով զարդարել տունը: Չարդարուած ծառը եղելինս է,



որովհետեւ քրիստոնեաները կը հաւատան, որ եղեւինը կապուած է կեանքի ծառին՝ Յիսուսի հետ: Իսկ եղեւինին մշտադալարութիւնը կը խորհրդանշէ Աստուծոյ անսպառ բարիքներն ու շնորհները:




Տօնածառին գագաթը դրուած աստղը Բեթլեհեմի աստղն է, որ մոգերը առաջնորդած է մտւոր, ուր ծնած էր Յիսուս մանուկը:

Տօնածառին գոյնը գոյն լոյսերը կը խորհրդանշեն քրիստոնեական լոյսը, զոր մեզի տուաւ մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոս:



Ժամանակ

# Ժ Ա Մ Ա Ն Ց




Ամբողջացրո՛ւր մեծ տուփիկը՝ օգտագործելով ամանորեան առարկաները այնպես, որ իւրաքանչիւր սիւնակ եւ հորիզոնական գիծ (2x3, այսինքն՝ վեց տուփիկ) պետք է ունենայ միայն մէկ տեսակի Կաղանդի պատկեր:



Փորձե՛ք գտնել արտասովոր եղնիկը:

| Գումար 34 |    |   |    | Գումար 42 |    |    |    |
|-----------|----|---|----|-----------|----|----|----|
| 7         |    |   | 14 |           | 18 |    | 9  |
| 2         | 13 | 8 |    | 8         |    | 15 | 14 |
|           |    |   | 5  |           |    | 10 |    |
| 9         | 6  |   |    | 6         |    | 13 |    |

Ամբողջացրո՛ւր տուփիկները այնպես, որ ուղղահայեաց, հորիզոնական եւ շեղակի գիծերուն գումարները համապատասխանեն վերեւ նշուած գումարին:



Փորձե՛ք հասնիլ Կաղանդ պապային գործատեղին:



Լա՛ւ դիտե երկու պատկերները եւ գտի՛ր 15 տարբերութիւնները:

## ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼ

Օր մը Շահանը եւ մօրաքոյրը գացին դպրոցին մօտիկ գտնուող գրախանութիւնը, Շահանին չքաւոր ընկերոջ՝ Սարգիսին համարնուէրներ գնելու եւ անոր հաճելի անակնկալ մը մատուցելու:

Երբ անոնք հասան Սարգիսին խեղճուկ բնակարանը, դուռը թակեցին: Կարճ ժամանակ ետք դանդաղօրէն դուռը բացուեցաւ եւ դրան ետեւէն դուրս ելաւ շատ գեղեցիկ աղջնակ մը: Սարգիսին քոյրն էր՝ Նարէն: Ան Սարգիսէն փոքր էր եւ չէր հասկնար իրենց վիճակէն: Յանկարծ մօտեցաւ Սարգիսին մայրը եւ ներս հրաւիրեց Շահանն ու Յերանուշը: Երբ Յերանուշ տեսաւ Սարգիսին մայրը, անդրադարձաւ, որ նախորդ օրը անոնք հանդիպած էին գիւղի նպարավաճառներէն մէկուն քով, եւ յիշեց, թէ ինչպէ՛ս այդ կինը իր քովի վերջին դահեկանը հանեց եւ գնեց հին ու չոր ցամաք հաց մը: Եւ այդ պահուն ան իր ձեռքի տոպրակները դրաւ պաղ գետինին վրայ եւ գրպանէն հանեց այնքան գումար, որ բաւարար ըլլայ մէկ ամսուան ուտելիքի եւ հագուստեղէնի համար: Այդ պահուն ներս մտաւ Սարգիս՝ ցամաք հաց մը ձեռքին, որ վաստակած էր փայտ կտորելով: Շահան կը վազէ դէպի Սարգիսը, կը փաթթուի անոր եւ նուէրները կը յանձնէ: Տիկին Յերանուշ Սարգիսը, մայրը եւ քոյրը կը հրաւիրէ իրենց տունը, որպէսզի միասին նշեն Նոր տարին:

## ԱՍՏՂԻԿ ԽՕՇԵԱՆ

### ՍԱՐԳԻՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՕՇԻԿԸ

Շահան եւ Յերանուշ գացին Սարգիսին նուէրները առնելու: Ճամբան հանդիպեցան Սարգիսին մօրը, որ մտահոգաւ կը պտըտէր՝ կարծես բան մը կը փնտռէր: Շահան եւ Յերանուշ գացին կնոջ մօտ եւ հարցուցին, թէ ի՞նչ կը փնտռէր: Ան կարճ պատասխանով մը ըսաւ. «Չաւակս»: Շահան եւ Յերանուշ երկար մտածելէ ետք պատասխանեցին. «Միասին կը փնտռենք Սարգիսը»:

Անոնք երկար քալելէ ետք տեսան Սարգիսը, որ խանութի մը առջեւ կուլար: Տիկին Սեդան ուրախութեամբ փաթթուեցաւ իր գաւակին: Շահան եւ Յերանուշ կամաց մը նուէրները առին եւ գացին Սարգիսին տունը, ուր մարդ չկար: Շահան ելաւ տան տանիքը եւ ծխնելոյզէն իջեցուց Սարգիսին կարգ մը նուէրները: Նուէրներու միւս մասը անոնք տուին տիկին Սեդային, որպէսզի նուիրէ իր գաւակին եւ ուրախացնէ զայն: Սարգիսը տեսաւ իր նուէրները, եւ

մանաւանդ իր առաջին կօշիկը, շնորհակալութիւն յայտնեց իր մօրը եւ շնորհակալական նամակ դրկեց Կաղանդ պապային:

Ուստի, կը մաղթեմ, որ ամէն մարդ բարի սիրտ ունենայ Շահանին պէս, եւ ուրախ օրեր:

## ԼՈՌԻ ՉԷՅԹԵԱՆ

### ՇԱՀԱՆԻՆ ԱՆՆՈՒՈՒԹԻՒՆԸ

Յերանուշը եւ Շահանը դպրոցի քովի խանութը գացին ու առին նուէրներ եւ անշուշտ կօշիկ ալ նուէրներուն մէջ դնելու համար ու տարին Սարգիսին տունը: Երբ Սարգիս տեսաւ Շահանը, որ նուէրներ եւ կօշիկ բերած էր իրեն, ուրախութենէն լացաւ եւ միայն մէկ բառ կրցաւ ըսել՝ «Շնորհակալութիւն», եւ սկսաւ արագ-արագ նուէրները բանալ: Շահան Սարգիսին քոյր չալ նուէր տարած էր: Երբ Սարգիսին քոյրը՝ Վարդը, նուէրը բացաւ, շնորհակալութիւն յայտնեց Սարգիսին եւ Յերանուշին: Շահան քանիցս արցունքի կաթիլներ տեսաւ Սարգիսի աչքերուն մէջ եւ անոնք իրարու մօտենալով գրկեցին զիրար: Շահան մատնացոյց ընելով ըսաւ Սարգիսին, որ մէկ նուէրէն բացած, երբ Սարգիս այդ նուէրը բացաւ, ուրախութենէն սկսաւ լալու, որովհետեւ այդ նուէրը իր երագն էր: Սարգիսին մայրն ալ սկսաւ լալու եւ նորէն շնորհակալութիւն յայտնեց Շահանին ու անոր մօրաքոյր: Երբ գիշերը անոնք տուն հասան, մտածեցին, թէ ի՞նչ լաւ բան է չքաւոր ընկեր մը ուրախացընել, եւ ուզեցին ուրիշ մարդիկ ալ ուրախացնել նուէրներ նուիրելով:

## ԱՐԱՉ ԹԱՍԼԱՔԵԱՆ

### ՏՈՊՐԱԿ ՄԸ ՆԱՐԻՆՉԸ

Ամէն մարդու իրաւունքն է Կաղանդի օրը ուրախ անցընելն ու նուէրներ փոխանակելը:

Կաղանդի նախօրեակին, երբ Սերոբ իր մօրը հետ շուկայէն կը վերադառնար, տեսաւ չքաւոր տղայ մը, որ անձրեւին տակ դրամ կը մուրար: Երբ անոնք տուն հասան, ան իր մօրը օգնեց, որպէսզի իրենց գնած պիտոյքները տեղաւորեն: Յաջորդ առաւօտ Սերոբ արթնցաւ, հագուստները փոխեց եւ առանց նախաճաշելու գնաց իր մեծ հօր ցանած նարընջէնիին քով, լեցուց նարինջները տոպրակի մը մէջ եւ վազելով գնաց այդ աղքատ տղունքով՝ անոր տալով այդ տոպրակը: Աղքատ տղան շատ ուրախացաւ, շնորհակալութիւն յայտնեց Սերոբին ու գրկեց զինքը:

Սերոբ շատ ուրախ էր, որ կրցած էր Կաղանդի առիթով ուրախացնել չքաւոր

տղայ մը եւ որոշեց ամէն տարի Կաղանդին ուրախացնել չքաւոր փոքրիկ մը, ծեր մը կամ հիւանդ մը:

Այդ օրը այդ չքաւոր ընտանիքին ամէնէն ուրախ օրերէն մէկն էր, որովհետեւ շատ քիչ մարդիկ կը մտածեն չքաւորներուն մասին եւ օգտակար կը դառնան անոնց:

## ԳԱԲՐԻԷԼ ՀԱՄԹԵԱՆ

### «ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ»

Կաղանդը այն առիթն է, երբ ամէն մարդ ուրախ մթնոլորտի մէջ կ'ըլլայ: Կը զարդարուին տուները, թաղերը, գիւղերը եւ քաղաքները: Մարդիկ իրարու հետ նուէրներ փոխանակելով կ'անցընեն ուրախ ժամանակ մը: Սակայն այս ուրախ սոսին ընթացքին կարելոր է նաեւ իրարու օգնել եւ ուրախացնել կարօտեալները:

Կաղանդի օր մը, հարուստ մարդ մը կը պտըտէր գիւղին գեղեցիկ, զարդարած ու լուսաւոր թաղերուն մէջ: Կ'երթար խանութներ եւ նուէրներ կը գնէր ընտանիքին, զարմիկներուն եւ ընկերներուն: Յանկարծ կը տեսնէ, որ փոքրիկ տղայ մը կը փորձէր խաղալիք գողնալ: Երբ այդ մանչուկը տեսաւ, որ մէկը զինք կը դիտէր, անմիջապէս նետեց գողցած ապրանքները եւ սկսաւ վազել: Հարուստ մարդը ետեւէն գնաց, բռնեց զինք եւ սկսաւ յանդիմանել զայն ու բացատրել անոր, որ գողնալը լաւ բան չէ: Սակայն անդրադարձաւ, որ այդ տղան աղքատ ընտանիքի մը գաւակն էր, որ ո'չ ապրելու տեղուններ, ո'չ ալ՝ դրամ: Այս մարդը շատ մեղքաւ տղուն եւ անոր գնեց ուզած խաղալիքն ու դրամ տուաւ, որպէսզի տանի իր ծնողքին: Յետոյ ան նկատեց, որ այդ գիւղին մէջ կային բազմաթիւ աղքատ մարդիկ, որոնք կը տառապէին, մինչ ինք կ'ապրէր հանգիստ եւ ուրախ կեանք մը: Հետեւաբար որոշեց պտըտիլ եւ բոլոր աղքատ մարդոց դրամ եւ նուէրներ բաժնել, որպէսզի անոնք եւս ուրախ անցընեն Նոր տարին: Այդ օրը եղաւ այս մարդուն կեանքին ամէնէն ուրախ օրը: Ան ամէն տարի սկսաւ այսպէս պտըտիլ եւ օգնել մարդոց: Մենք մինչեւ հիմա կը տօնենք Կաղանդ եւ այս մարդը ամէն տարի կու գայ փոքրիկները ուրախացնելու համար. ան «Կաղանդ պապա» կը կոչուի:

Յուսանք ան կ'օգնէ բոլորին, եւ աղքատ մարդ չի մնար աշխարհի տարածքին:

## ՆԱԶԷ ԱՅՆԹԱՊԵԱՆ



## ԴՊՐՈՑԱԿԱՆ



Մեղեդի Հաճեան  
Ե. դասարան



Կարո Տուզմանեան  
Ա. դասարան



Կալինա Գասամանեան  
Բ. դասարան



Մերի Թալալբեան  
Ե. դասարան



Ալիք Համուտեան - Դ. դասարան



Արեւ Թաշճեան - Դ. դասարան



Ալեքս Գապագեան - Զ. դասարան



Նանոր Ֆաւրճեան - Դ. դասարան



Մերլի Արուշեան - Դ. դասարան



Ռալֆ Աշգարեան - Դ. դասարան



Անդո Քիսալբեան - Դ. դասարան



Յակոբ Գրիգոր - Դ. դասարան



Լալէ Տումանեան - Զ. դասարան



Դրո Գալեմբեան



Ռիթա Բենտիքեան



Լոռի Ճապրայեան